

Հ Կենտրոնական բանկի նախագահի  
Որոշում N 1/124Ա

23/02/2018

«ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ  
ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն 2018 թվականի հունվարի 19-ին Հայաստանի  
Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացրել.

- 100,000,000 ԱՄՆ դոլար ծավալով,
- 10,000,000 ԵՎՐՈ ծավալով և
- 5,000,000,000 ՀՀ դրամ ծավալով

արժեկտրոնային պարտատոմսերի ծրագրային ազդագրի գրանցման հայտ, ինչպես նաև  
համապատասխան ազդագիրը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի  
նորմատիվ իրավական ակտով ազդագրի գրանցման համար պահանջվող բոլոր  
փաստաթղթերը:

«ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն 2018 թվականի փետրվարի 14-ին Հայաստանի  
Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացրել նաև ծրագրային ազդագրի լրացում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ  
մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ  
հոդվածը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և  
վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2018 թվականի փետրվարի 21-ի թիվ 7  
արձանագրություն)

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Գրանցել «ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 2018 թվականի հունվարի 19-ին  
ներկայացված.

- 100,000,000 ԱՄՆ դոլար ծավալով,
- 10,000,000 ԵՎՐՈ ծավալով և
- 5,000,000,000 ՀՀ դրամ ծավալով

արժեկտրոնային պարտատոմսերի ծրագրային ազդագիրը:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ՆԵՐՍԵՍ ԵՐԻՑՅԱՆ

